3785.

ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ III ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ТРЕТЬЯ ГОДОВЩИНА ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ

9(47).1917
Հ-75

1920.

9 AUG 2011
24 JAN 2006
9(47) „1917"
Հ-75

Երբ թարգմանիչն արդեն վաղուանից առում է մեզ—դա պարզ ապացոյց է այն մտադրութեան, որ մենք ցոյց ենք տալիս ժողովրդին ազատագրման շնորհք ուզելու։

ՀԵՂԻՆ.

Государственное Издательство. Армянская Секция.
РОСТОВСКОЕ Н-Д. ОТДЕЛЕНИЕ.

2090
~~2099~~

14-е отделение Допполиграфотдела С. Н. Х

12 JUN 2015

54169-66

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԲՆՈՒԹԸ:

Նոյեմբերի 7-ին (հին տօմ. հոկտ. 25) Պետերբուրգում բռնկած յեղափոխութիւնը մարդկային հասարակութեան պատմութեան գրքում սկսեց մի նոր էջ—կոմունիզմի լուսաւոր էջը։ Այդ անմահ օրը հիմք դրեց մի իշխանութեան, որը նպատակ ունի ազատագրել կապիտալիզմի անտեսի կապանքներից ամբողջ աշխարհի բոլոր շահագործուած դասակարգերին և ժողովուրդներին։ Այդ միջազգային նպատակն իրագործել կարող է միայն միջազգային պրոլետարիատը իւր միջազգային յեղափոխական յարձակմամբ կապիտալիզմի հուժկու դիրքերի վրայ։

Ռուսական պրոլետարիատը ցարական-կապիտալիստական միահեծանութեան և մանր բուրժուական դատաճանութեան փլատակների և դիակների վրայ հիմնելով իր դասակարգային դիկտատուրան՝ առաջինը նետուեց անօրինակ անձնուիրութեամբ այն չտեսնուած կռիւի ասպարէզը, ուր յաղթելու և տիրելու է ամբողջ

մարդկության ազատագրության կարմիր դրոշակը։ Եվ անհատապես պայքարում արնաքամ և յոշոտված Հոկտեմբերյան Կոմունարները, այսօր, երբեք տարբեր զօտեմարտից յետոյ, նայելով յետ՝ տեսնում են խընդությամբ, որ պատերազմի դաշտում այլևս մենակ չեն իրենք, որ աշխարհի բոլոր ծայրերից զունդա-զունդ շարժվում են դեպի քաղաքացիական, դասակարգային կռվի ֆրոնտը միջազգային բանվորության նորանոր ահեղ բատալիոնները։

Երրորդ Ինտերնացիոնալը, միջազգային պրոլետարիատի յեղափոխական շտաբը համաշխարհային յեղափոխության կարմիր հայրենիքից, Ռուսաստանից դեկավարում է մի անօրինակ, մարդկային պատմության մեջ չտեսնված մասսայական շարժում։ Աշխարհի բոլոր ցամաքներում—Եվրոպա, Ամերիկա, Աֆրիկա, Ասիա առանձակ միլիոնավոր շահագործված, իրավազուրկ և մերձիմահ դասակարգերն ու ժողովուրդները չնայած ամեն հալածանքներին և սարսափներին՝ կազմակերպվում և շարաչվում են զենքերով իմպերիալիզմի դեմ։

Մարքսն ասել է. «Մարդկությունն իր առաջ միշտ այնպիսի խնդիրներ է դնում, որոնց նա կարող է լուծել... որովհետև այդ խնդիրներն առաջ են գալիս միայն այնտեղ, ուր արդեն գոյություն ունին նրանց լուծման նյութական պայմանները, կամ թե այդ պայմանները գտնվում են զարգացման պրոցեսում»...

Բոլոր յեղափոխությունները արդիանք են մարդկային հասարակության նյութական կեանքի հակասությունների, հասարակության արտադրողական ուժերի և մասնատիրական յարաբերությունների կոնֆլիկտի։

Այդ տեսակետից մօտենալով Հոկտեմբերյան յեղափոխության գնահատմանը, հնարաւոր է ցայտուն կերպով ըմբռնել նրա համաշխարհային բնույթը։

Ֆինանսական կապիտալը, կապիտալիզմի զարգացման վերջին փուլը, հասաւ այն տուպիկին, որից նա կարող է միայն դուրս բերել որպես դիակ։ Նրա ստեղծած բանկային հիմնարկությունները, արհեստներն ու սինդիկատները իրենց ձեռքում կենտրոնացնելով առաջաւոր երկրների բոլոր արտադրական միջոցների մեծագույն տոկոսը՝ փաստորեն սկսեցին չեզոքացնել կապիտալիզմի զարգացման հիմնական պայմանը, փոխարարձ մրցումը։

Շուկան մենաշնորհ դարձաւ զանազան երկաթի, ածուխի, երկաթուղիների, կաթնեղենի ֆինանսական «արքաների» համար։ Բոլոր մոնոպոլիական ձեռնարկությունները ու ամբողջ առևտուրը քայքայեցին կախման մեջ ընկան ֆինանսական կապիտալից։

Մնում էր ֆինանսական կապիտալին լուծել մի հարց թե, ով է լինելու ամբողջ աշխարհի շուկայի և բոլոր արտադրական միջոցների հզոր տերը։ Ֆինանսական կապիտալը զարգացման հասաւ միաժամանակ

Եվրոպայի և Ամերիկայի բոլոր առաջատար երկրներում։

Բայց աշխարհը «բաժանված էր» վաղուց ի վեր։

Սակայն այդ բաժանումը չէր համապատասխանում ֆինանսական կապիտալի իսկական ուժին գտնվող երկրներում։ Այդ կապիտալի քաղաքական արտայայտությունը—իմպերիալիզմը իր ցամաքային և ծովային զինական ուժերի անօրինակ կատարելագործմամբ ոչ միայն ապահովում էր նրա տիրապետությունը իր սահմաններում, այլ և ճնշում էր իբրև ազդու սպառնալիք հարևան ակուլաների դեմ։ Զինված ընդհարումն անխուսափելի էր այդ պայմաններում և, իրոք, համաշխարհային պատերազմը նախապատրաստվում էր տասնյակ տարիներ։

Ֆինանսական կապիտալը փորում էր իր տակը, սակայն, ոչ թե նրանով, որ պատրաստվում էր համաշխարհային պատերազմի, այլ նա, անկախ իր կամքից, կազմակերպում էր պրոլետարիատը, ստեղծում էր նրա գործակալներ՝ բանվորական երաշխիքներ իրագործելու հնարավոր դարձնող։

Առաջատար երկրների աղքատությունը մեծագույն մասը պրոլետարիզացիայի ենթարկելով և ընկնելով կախման մեջ սակավաթիվ և որոշ ֆինանսական ջոջերից՝ ոչ միայն ուժի հեշտ էր ըմբռնում դասակարգային շահագործման էությունը, այլ նաև հասկանում էր աշխարհայացքով, որ այդ շահագործությունը վերացնելու համար բավական է միայն մեջտեղից վերացնել կապիտալի տերերին և արդյունաբերական բոլոր միջոցները յայտարարելով արտադրողական ուժերի, այսինքն բանվորների, ամբողջ աշխատավոր մարդկության ընդհանուր սեփականություն, ըստ հարկի։

Կոմունիզմը թեզիսից դարձավ մի այնպիսի կոնկրետ խնդիր, որ պահանջում է իր լուծումը այսօր կամ վաղը։ Կաուցկին և Հիլֆերդինգը համաշխարհային իմպերիալիստական պատերազմի նախաբեմին (1912 թ.) քննություն անելով այդ խնդիրը՝ տարբեր ճանապարհներով հանգում էին այն եզրակացությանը, թե հասել է արդեն սոցիալիստական յեղափոխության դարաշրջանը։

Համաշխարհային կոմունիստական յեղափոխության կարմիր հոկտեմբերն, այսպիսով, վաղուց էր նախապատրաստվում իմպերիալիզմի ծոցում. նա ամենևին արդյունք չէ բոլշևիկյան ուսմունքների իմաստասեր աշխատանքի։

Անհայտ էր սակայն, թե որտեղից և երբ կբռնկվաված հոկտեմբերը, անհայտ էր նույնպես, որ նրա գաղափարները կանցնեն հակակապիտալիստական գիրկը՝ հաջան շինիկների գիրքում, ինչպես դա պատահեց Կաուցկու, Հիլֆերդինգի և շատ շատերի հետ։

Ապագայ համաշխարհային սարսափելի սպան-

դանոցը նկատուում էր II-որդ սոցիալիստական ինտերնացիոնալում, որպէս յեղափոխութիւնն արագացնող մի հարուած այն տեսակէտից, որ ծրագրուած և որոշուած էր պատերազմ յայտարարելու դէպքում, իւրաքանչիւր երկրում քաղաքացիական կռիւ սկսել բոլոր միջոցներով սեփական կապիտալիզմի դէմ համաշխարհային յեղափոխութեան նշանաբանով II ինտերնացիոնալի անմիջական դեկավարութեամբ։

Բայց ճշմարիտ է նկատել Մարքսը, թէ «բանուորութեան ամենամեծ թշնամին իրենք, բանուորներն են»։ Կապիտալը ուժեղ էր ոչ միայն իր զրահաներով, դժոխային մեքենաներով, ոստանութեան և աւերածութեան իր կատարելագործուած դժոխային գործիքներով, ոչ, նա ուժեղ էր դեռ ևս ինտերնացիոնալում բաղմած մանր-բուրժուական հոգեբանութեան տիպար մարդուկների շնորհիւ, որոնք կուշտուած նրանցից, կամ «ազգային ինքնապաշտպանութեան» ախմար խարէութիւնից կուրացած՝ մոռացան լկտիօրէն իրենց խոստումները, թաղեցին սկսած պատերազմի օրոտների տակ այնքան զոհերի գնով ամրացած ինտերնացիոնալը և ժամանակաւորապէս կարողացան միջազգային պրոլետարիատը հարբեցնել շովինիզմի թոյնով։

Բայց միայն ժամանակաւորապէս։ Պրոլետարիատը միայն դաւաճաններ չանեց իւր ծոցում։ Կոմունիզմի և յեղափոխական ինտերնացիոնալի առանցները չէր կորան։ Սկզբում ընդհանուր օրսի և ժիսրի մէջ համարեա տնչսելի, յետագայում աւելի ու աւելի բարձր, անդադար հնչում էր միջազգային յեղափոխութեան զինուորների, Լենինի, Լիբկնեխտի, Լօբիոյի, Լիւքսեմբուրգի, Մեհրինգի, Մակլինի և այլ բանուորութեան հարազատ զաւակների հոգու ձայնը պատերազմի և շովինիզմի դէմ։ Կոմունիստական Ինտերնացիոնալը, թէպէտ և վիրաւոր, ծաղրուս ծանակի ենթակայ, բայց անդադար հնչեցնում էր իւր զանգը հրաւիրելով ի փառս իմպերիալիզմի նահատակող միջազգային բանուորութեանը յեղափոխական, դասակարգային կռուի ընդդէմ կապիտալի հրեշային տիրապետութեան։

Ռուսական փետրուարեան յեղաշրջումն ու նրան նական շարունակութիւն Հոկտեմբերեան մեծ Կոմունիստական յեղափոխութիւնը լինելով անմիջական արդիւնք առատական կապիտալիստական իրաւակարգի նեխման՝ իրենց սկզբնաւորման հէնց առաջին ժամից դէմ յանդիման ծառացան համաշխարհային իմպերիալիզմի դէմ։ Փետրուարեան յեղաշրջման մանր բուրժուական դեկավարները մի թեթև փոքր արին յեղափոխական ժասսաների հոգու ճնշման տակ պատերազմի խնդիրը լուծելու յեղափոխական ճանապարհով։ Նրանք դիմեցին մի նշանաւոր կոչով Եւրոպայի պրոլետարիատին՝ բռնել յեղափոխական ուղին և գլորել սեփական իմպերիալիստական կառավարութիւնները։ Բայց բաւական էր, որ իմպերիալիզմը շարժէր իւր

ժառաբ, որպէսզի վախեցած փոքրագի ամարդիները մոռանան ժողովրդական լայն մասսաների իրաւացի պահանջները և իրենց ուսոր դաւաճանութեան հատուցումը փոխարինեն չաղիկ պաշտօններով և կլորիկ ռոճիկներով։

Գատերազմի խնդիրը լուծելու համար այլ մարդիկ էին պէտք։ Եւ պրոլետարիատը Ռուսաստանում հանեց նրանց հրապարակ իւր կուռ շարքերից։ Կոմունիստներն էին դրանք։

Նոյեմբերի 7-ին, ուզիղ երեք տարի առաջ, Ռուսաստանի պրոլետարիատը հաստատելով իւր դասակարգային գիկտատուրան Խորհրդների իշխանութեան ձեւով մարտահրաւէր կարդաց «սերբակալ» կապիտալին և յայտարարեց ամբողջ աշխարհով մէկ, որ նա մենակ կը կռուի կոմունիզմի դրոշակի տակ ընդդէմ բոլոր երկրների իմպերիալիստական հորդաների այնքան ժամանակ, մինչև կամ կը ոչնչանալ, կամ օգնութեան հասած միջազգային բանւորութեան հետ կը ստեղծի կարմիր յաղթանակի լուսաւոր օրը։

Եւ չը նայած բոլոր տրգելքներին ու կորդաններին, չը նայած որ աշխարհի բոլոր ռազիոներն ու սէրոպլանները, հեռագրաթելերն ու նաւերը դանւում էին շահագործող դասակարգերի ձեռքին՝ մեր երկրագունդի մարդկային ընակչութիւնը զարմանալի արագութեամբ իմացաւ Պետերբուրգից հնչած կարմիր ճչմարտութիւնն այն մասին, որ աշխատանքի ազատագրութեան երազները իրագործւում են դասակարգային պատերազմի դաշտերում, որ մարդկային հասարակութեան պատմութեան նոր դարաշրջան է սկսած—շահագործուածների մասսայական ապստամբութիւնների, կապիտալիստական կարգերի բռնի խորտակման հերոսական էպոխան։

Շահագործողների ամբողջ վոնմակը, քանկիրներից և գործարանատէրերից սկսած մինչև մանր բուրժուական մենշեիկ, էսէր և այլ փոքրիկ «Թագի»-ները դգալով իրենց Թագաւորութեան խայտառակ անկումը՝ մի ընդհանուր ոռնոց և վայնասուն բարձրացրին «մարդկային թագաբակրութեան պատուները» ոչընչացնողների դէմ։ Կեղծիքի, ստութեան և զրպարտութեան կեղտոտ ջրերը որպէս առատութեան եղջիւրից սեղացին կոմունիստների հասցէին։ Բայց այդ «պատուաւոր» գործը սպասում է յատկապէս սոցիալիստական վատանոզի դաւաճաններին. կապիտալը առանց ժամանակ կորցնելու երկաթէ օղակների մէջ առաւ յեղափոխական Ռուսաստանը և փորձեց կոմունիզմի ձայնը խեղդել Թնդանօթների, տանկերի և ռազմանութեան այլ միջոցների միջոցով։ Եւ դա, անշուշտ է երեք տարի...

Զգալ ջանքեր։ Սեփական ներքին հակասութիւնների թոյնից մերձիմահ՝ իմպերիալիզմը թէպէտ և զարհուրելի հարուածներ է հասցնում Կոմունիզմի Հայրենիքին, մատնել է նրան սովի, ցրտի և հիւանդութիւնների ուերածութեանը, սակայն երեք տարուայ օրհասական պայքարի ընթացքում չէ յաղթանակել ընտուին, այլ կրել է հակաչական պարտութիւններ։

Ֆինանսական կապիտալը սկսեց պատերազմը աշխարհին միջնեծան ակը լինելու համար։ Պատերազմը վերջացել է Անտանտայի յաղթությամբ։ Բայց աւելի, պատերազմի կուսակցական երկրները զրահաւորուած՝ պատերազմ են յայտարարել «յաղթականներին» և բնաւ մտադրութիւն չունին հաւեղ մարդասական կերպով լինել Սիբիրի բնակիչների համար։ Արևելքի յեղափոխական հրդեհը ծաւալւում է հսկայական արագութեամբ։ Տաճկաստան, Պարսկաստան, Եգիպտոս, Սուրիք, Արաբիա, Չինաստան, Հնդկաստան դառել են իմպերիալիզմի համար մի մի կրակէ շաղանակներ։ Նա չէ կարող ձեռքը չը մեկնել նրանց, բայց այլում են։ Շուտով այդ կրակէ շաղանակները կը վերածուին ռումբերի և ընդմիշտ ցաք ու ցրիւ կը տան կապիտալիզմի շահագործութեան ու կեղեքման բոլոր ամրութիւններն իրենց երկրներում։ Եւ նրանք պատրաստւում են այդ անել Խորհրդային Ռուսաստանի անմիջական օգնութեամբ և դեկավարութեամբ։

Բայց կապիտալիզմի վիճակն աւելի ողբերգական է իւր հայրենիքում։ Պրոլետարիատն այլևս չէ լսում «փրկուած» դեկավարներին։ Ո՛չ մի կերպ դեղին ինտերնացիոնալը չէ կարողանում վերակենդանանալ։ Բանւորութեան քաղաքական և պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների ճնշող մեծամասնութիւնն այժմ բարձրացրել է Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալի դրօշակը։ Միջազգային պրոլետարիատն ուժեր է հաւաքում պատերազմի դաշտ նետւելու Ռուսական Հոկտեմբերի նշանաբաններով։ Իսկ մինչ այդ ցասկոտ մանչիւնով նա հրամայում է Զորջերին, Միլերաններին և այլ բազմաթիւ մեծ ու փոքր առաջնորդներին. «Հեռու ձեր ձեռքերը Խորհրդային Ռուսաստանից»։

Ինչպէս, իմպերիալիզմը չի հրաժարւի կոմունիզմի օջախը Երրորդ Ինտերնացիոնալի կենտրոնը քանդելու իւր ցնորքից։ Ռուսաստանի կոմունիստների հոգաղող կարմիր բանակին, համաշխարհային յեղափոխութեան այդ առաջաւոր գունդարանակին դեռ սպասում են նորանոր ճակատամարտներ։

Նա կատաղակել է մինակ ամբողջ երեք տարի յաղթականօրէն ամբողջ աշխարհի թշնամի մարդկութեան ազատագրութեան համար պայքարել և չընկնել։ Այժմ նրա անօրինակ վեհ անձնազոհութեան և հերոսական զոհերի գնով հրդեհւել է մարդկութեան հորիզոնը։ Այսօր նրա պայքարի երրորդ տարեդարձը տօնւում է բոլոր երկրների խրճիթներում և ներքնատներում։

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը կարող էր յաղթանակել միայն որպէս համաշխարհային կոմունիստական յեղափոխութիւն և նա այսօր, մեր աչքերի առաջ, յաղթանակում է որպէս համաշխարհային կոմունիստական յեղափոխութիւն։

Եւ այլ կերպ չէր կարող լինել, որովհետև «Մարդկութիւնն իւր առաջ միշտ այնպիսի խնդիրներ է

գնում, որոնց նա կարող է լուծել... որովհետև այդ խնդիրներն առաջ են գալիս միայն այնտեղ, ուր արդեն գոյություն ունին նրանց լուծման նիւթական պայմանները...»։

Ցեղափոխութեան մեծ ուսուցչի խօսքերն արդարանում են լիովին։

Վ. Մաթիկեան

54169-66

ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՌԻՔՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ.

Հոկտեմբերեան յեղափոխութեան տարեդարձն է...

Ռուսաստանի հիւսիսային սառնամանիքում ընդմնաւորված—իմպերիալիստական պատերազմի փլատակների վրայ ծնող ու ծաւացող Հոկտեմբերը—անցած երրորդ տարին է ինչ Դամոկլեսեան սրի պէս կախված հին Եւրոպայի կողոպտիչների ծերունաղարդ գլխին, ոռոգում է աշխարհը «մի նոր կեանքի» կենարար յոյսով, վաղուայ արևածագի հեռանկարներով...

Ժողովուրդների պատմութեան ընթացքում յեղափոխական և ոչ մի շարժում իր թափով ու լայնութեամբ այն նշանակութիւնը չի արել, ինչ Հոկտեմբերեան Մեծ Ցեղափոխութիւնը, որի ալիքները համաշխարհ արագութեամբ ողողում են և՛ Արևմուտք, և՛ Արևելք։ Նրա դասակարգային ընոյթի ու ներքին՝ պրոլետարական հարազատութեան ու ճշմարտութեան մէջ պէտք է նաև փնտրել այն հմայքը, որ արագօրէն դարձնեց ու սրբազործեց ռուս պրոլետարիատը իր

կարմիր աբլահով։ և այսօր էր իսկ կորովի—կեանքի գնավոնիբարերում է նա տնտեսապես քայքայած, քաղաքականապես ստրուկ մարդկութեան։

Հրապարակ նետելով ազատ աշխատանքի, պրոլետարիատի ու գիւղի չքաւորութեան դիկտատուրա լոզունգները, բնականաբար յեղափոխական պրոլետարիատը իրապատուկ ուշադրութիւն դարձնէր նաև կեղեքուողների ու ստրուկների այն կլասիկ հայրենիքի (Արևելքի) վրայ, որին տգիտութեան մէջ պահելով՝ վիշքեշներով ու խոստումներով այնքան փայփայում էր «կրթեալ» Եւրոպան։ Եւ այսօր մենք ականատես ենք այն հակայոգորմումներին, խորհրդաւոր վերականգնումին, որ կատարւում է Արևելքում։ Ճնշած ժողովրդական մասսանները ապստամբում—ոչն են շաբրտում իրենց կապանքները, հաստատում իրենց իշխանութիւնը, իրենց կամքը՝ հողի, աշխատանքի վրայ։

Դա հոկտեմբերեան յեղափոխութեան ընթացքն է, պատմականօրէն անխուսափելի պայքարի մի էտապ, որ փոթորկում է ժողովուրդների անդորրը, մարտի կանչում յեղափոխականացող պրոլետարիատի նորանոր շարքեր՝ դասակարգային անհաշտ ու անդադար կռուի խորին վճռականութեամբ։

Նա դարձաւ նոյնպէս անկազմակերպ, դասային շերտաւորումից զուրկ ժողովուրդների ներքին պայքարի օրակարգ, քայքայելով, վերլուծելով նացիոնալիզմի հոտած քուրայում մնաց բուրժուական կարգերը։ Հոկտեմբերեան յեղափոխութիւնը բայայայտօրէն դէմ առ դէմ դանգնեցրեց պատմականօրէն երկու դասակարգեր—պրոլետարիատին և բուրժուազիային։

Նպատակայարմար զիգզագներով տարածւում, լայնանում է հոկտեմբերեան յեղափոխութեան յորձանքը դէպի Արևելք։ Անդրկովկասը յեղափոխութեան և հակայեղափոխութեան հանգոյցն է, այն կամուրջը, որ միացնում է դարեր շարունակ եւրոպական իմպերիալիզմի ճիրաններում տարկացած մանր ժողովուրդներին յեղափոխական պրոլետարիատի հետ։

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը յայտարարելով պատերազմ կապիտալին և, բնականաբար, գաղութների միլիոնաւոր ճորտերի ազատագրութեան խնդիրը իր վրայ վերցնելով, պէտք է առաջին հերթին մահացու հարուած հասցնէր նրա տնտեսական շուկաներին։

Այս երեք տարիների ընթացքում Անդրկովկասը դարձաւ ոչ միայն այդ պայքարից խուսափող առաջ հակայեղափոխութեան թիկունքը, այլ և երես թեքելով յեղափոխութիւնից՝ փարեց համաշխարհային հակայեղափոխական բանակին։

Հակայեղափոխութիւնը թուլացել է այն չափով, ինչ չափով որ անդրադարձել է Անդրկովկասի իրականութեան վրայ հոկտեմբերեան յեղափոխութիւնը՝ ուժեղացնելով դասակարգային դիտակցութիւնը աշխատաւորութեան լայն շրջաններում։

* * *

Անդրկովկասեան ժողովուրդների սոցիալ-տնտեսական շահերը այնքան են սերտօրէն ձուլած ծայրառնող նացիոնալիստական ողղութեան հետ, որ ամէն մի յեղափոխական բռնկում՝ բուրժուազիան ու նրա սրտակից աղգայնական կուսակցութիւնները առանձին հնարագիտութեամբ թեքում, հակառակ ուղղութիւն են տալիս։

Աղգային մոմենտը միշտ օգտագործել են համաղօր եռանդով հայ կղերն ու նրա խնամակալ դաշնակցութիւնը, Թուրք մոլլաներն ու մուսաւաթը և Քրդուստանը էլ խեղդել են յեղափոխական տարրի «յանկարծակի արեան» մէջ ամէն մի հակաբուրժուական ձգտում, ծառացում։

Դեռ ևս 1905 թ. յեղափոխութեան արձագանքը Անդրկովկասի «խաղաղ» երկնակամարի վրայ թողնց մի սև բիծ։ Գետական մարդուկները ինչպես առաջին յեղափոխութիւնը թաղեցին հայ և Թուրք աշխատաւոր ժողովրդի արեան մէջ՝ ստեղծելով ցեղային անտանելիը, որից օգտուելով այժմ՝ 12 տարի յետոյ՝ 917 թ. յեղափոխութեան ընթացքը ուղղելու ընդդէմ աշխատաւորութեան՝ օգտագործեց հայ և Թուրք բուրժուազիան, վրաց թաւադական մենշևիզմի հովանու տակ ծածկուած։

Ո՞վ կարող է մոռանալ, որ բանտերը կամ գիւղացին՝ փետրուարեան յեղափոխութեան յաջորդող այն օրերը, երբ Անդրկովկասի վարչական կենտրոն Թիֆլիսը դարձել էր այդ երբեք նացիոնալիստական գրուպպաների ազգայնական քաղաքականութեան մրցման կրկէսը։

Բուրժուական յեղափոխութեան պաշտպանների տաղծած պետական խորհրդակը՝ Դոնի յայանի հակայեղափոխական Խարլամովի, Զիմնկէլու, Գապոնովի ու Զաֆարովի կոալիցիան ու սրան փոխարինող կոմիսարիատն ու սեյմը (Խատիսովի, Խան-Խոյսկու և Գեգեչկորու երրորդութիւնը) փոխարէն դարձաւ այն ամբոցը, որի հովանու տակ ոյժ ստացաւ, կազմակերպուեց հայ, Թուրք ու վրացի մուսաւաթը, բէգերի, կնեազների ու չարչիների վոնմակը, հայ Թուրք ու վրացի բանտարութեան, գիւղացիութեան ու ֆրոնտից վերադարձող զինուորական մասսայի դէմ։

Աշելին։ Մինչհոկտեմբերեան օրերին նոյն այդ «գիկավարները» տարուած անջատողական հովերով՝ ընդդծել էին դեռ ևս առաջին գիւղացիական համապատմարում ապագայ հայկական, վրացական ու Թուրքական դեմատոնների նախագիծը—այլ կերպ ասած Անդրկովկասի «ինտերնացիոնալիստ» ժորդանիանները, դաշնակ-մուսաւաթները առանց «արտաքին ճնշման» մարմանջում էին «ինքնուրոյն և անկախ» (ռուսական յեղափոխութիւնից?) ազատ ապրելու խոհերը։

Դժուար չէր կանխատեսել յեղափոխութեան այդ պիսի «ըմբռնողութեան» արդիւնքները։

Ժողովրդական լայն մասսաները դատապարտում էին նացիոնալիստական ոգով։ Յեղափոխութիւնը

իրօք դարձաւ մի խրաւիլակ, որ կարծես հնարաւորութիւն տուց միայն ուժեղացնելու ժողովուրդների ատելութեան թոյնը։ Թիֆլիսի պալատի մութ անկիւններում ազգային սոցիալ-դաւաճանների նացիոնալիստական երրորդութիւնը գծագրում էր իր-երկրի սահմանները, վարում իր ազգային առանձնայատուկ քաղաքական գիծը։

***

Պայթեց Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը։

Պրոլետարիատի ապստամբութեան ու յաղթանակի ուրբականը պահ մի վերջ է դնում այդ ինտրիգներին ու ստեղծում մի ֆրոնտ՝ լայն մասսաներում սեփականութիւն դարձող բոլշևիզմի դէմ։ Անդրկովկասի բուրժուազիան ու ազգայնական ինտելիգենցիայի մի խոշոր մասը՝ տարբեր իրենց սոցիալական վիճակով ու քաղաքական ձգտումներով, պատրաստ յարմար առիթի բղկեելու միմիանց—միանում, կազմակերպում են «յեղափոխութեան (!!) մի ճակատ» ընդդէմ Ռուսաստանում իշխանութեան ղեկը խլող ու հինգտարեայ ժողովը ցրող «գերմանական ոսկիներով կաշառուած» մի բուռն մարդկանց։

Ալեկոծուած Ռուսաստանի քաղաքական կեանքը կենտրոնանում էր երկու հակադիր ոյժերի շուրջը—սահմանադիր ժողովի ու հոկտեմբերեան յեղափոխութեան։ Վերջինս իր մասսայական բնոյթով դուրս

շպրտեց դէպի ափ ոչ միայն սահմանադիր ժողովը, այլ և նրան կառչած, նրանով շնչող բուրժուազիային, էսերներին և մենշեիկներին։ Պրոլետարիատը շրջապատուած ծայրադաւառներում կենտրոնացող ակընյայանի հակայեղափոխութեամբ, բառապատկում է իր ոյժը և հարուածը հարուածի հետևից իջնում է նրանց գլխին։

Անդրկովկասի քաղաքական կեանքի ղեկավարները որոշ և ամօթալի դեր են կատարել հակայեղափոխութեան օգնելու գործում։ Ակնյայանի փաստ է, որ Կոմիսարիատը մատակարարում էր Կալեդինին, Կարաուլովին զէնք ու ռազմամթերք։ Եթէ սրան աւելացնելու լինենք նաև այն, որ Անդրկովկասի քաղաքական կեանքի ղեկը միանգամայն գտնուելիս է եղել միայն մենշեիկների ձեռքին, պարզ կը լինէ այն դաւաճանութեան իմաստը, որ վարում է նաև մինչև այժմ վրաց մենշեիզմը։ Անդրկովկասը դարձել էր առաջին հերթին Ռուսական հակայեղափոխութեան թիկունքը։ Սակայն Բրեստի հաշտութիւնը ու քաղաքացիական կռուում տարուած մի շարք փայլուն յաղթութիւնները բաւական էին, որ վրաց մենշեիզմը անյետ կորչէր բոլշևիզմը թաղելու իր յոյսերը։ Եւ իր դրութիւնը փրկելու դիտաւորութեամբ Զխեիդզեի կառավարութիւնը տապալուում է համաշխարհային հակայեղափոխութեան. այստեղից էլ սկիզբ է առնում «անկախութեան» տրագիդիան ու իմպերիալիստական Եւրոպայի տարբեր խմբակցութիւնների շէմքերին ծունկ դնելու մենշեիզմի «դեմոկրատական» աշխատանքը։

Հոկտեմբերեան Յեղափոխութեան թշնամիների բանակին հարելը ինչպէս մուսաւաթի ու դաշնակցութեան, նոյնպէս և փետրուարեան յեղափոխութեան սոցիալ-դաւաճանների (Զիմէրմէն, Ծերեթելի) ու նրանց կուսակցութեան համար լինել չէր լինելու հարց էր, որովհետև «ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին» ասել էր—ոչնչացնել իշխող թուրք կալուածատիրութեան, հայ բուրժուազիային, վրացական դեմոկրատիայի յեղափոխական ասպետիկայից խուսափող, վախկոտ ու ազդոնացող ինտելիգենցիայի հովանաւորող դրութիւնը։

Բռնութիւնն ու զօրացումը առատ աղբիւր դարձաւ մթագնելու անդրկովկասեան աշխատաւորութեան դասակարգային գիտակցութիւնը, ու թունաւորելու նրա հանգիստը։

Թիֆլիսի պալատը ան ու դողի մատնուած նոր ծրագրեր էր մտմտում... Կազմակերպւում է Շամխորի դէպքերը, Գանձակի արիւնալից տեսարանները... Իրարու յետադայում դաշնակցութիւնը իր անցեալի մեղքերն էր (և որքան են դրա) լալիս՝ երբ այդ զէնք ու զինամթերքը ուղղուեց նաև նրա կրծքին։

Հոկտեմբերեան յեղափոխութեան ջանակիր կոմունիստական կուսակցութիւնը 1918 թ. սկիզբներից անցնում է անլեգալ դրութեան։

Այլ էր դրութիւնը արդիւնաբերական պրոլետարիատի կենտրոնում—Բաքուում, ուր շնորհիւ մեր ընկերների հոանդի ու բանւորութեան օգնութեան Մարտի սկզբներին իշխանութիւնը անցնում է Խորհուրդների ձեռքը։ Բաքվի պրոլետարիատը առաջինը ձայնակցում է հիւսիսային քաղաքների բանւորութեան. առաջինը՝ ողջ Անդրկովկասում—արդիւնաբերական աշխատաւորութիւնը փարում է Հոկտեմբերեան Յեղափոխութեան և բաց կռիւ յայտարարում ծայր առող հակայեղափոխութեան, որի բունն էր Թիֆլիսը։

Քաղաքական կռիւը անխուսափելի էր։ Բաքուն և Թիֆլիսը պէտք է բաղխէին։

Մուսաւաթը զինվարելով թուրք-ղերմանական շաբի ցուցմունքներով, մենշևիկների ու դաշնակների եռանդուն աջակցութեամբ սկսեց մի արշաւանք ընդդէմ յեղափոխական Բաքվի։ Այս արշաւանքը երկուստեք ձեռնտու էր թուրք աղալարների Անդրկովկասեան կօալիցիային։ Գանձակի նահանգում ծայր առած ազգարային շարժմանը*), որ սպառնում էր խախտելու բեկ-կնեազութեան ազդեցութեան հիմքերը, պէտք էր տալ այլ ուղղութիւն, պէտք էր գաղաղած գիւղացիութեան մի նոր կուսակ ոգևորել և դա անդրկովկասեան հակայեղափոխութեան «սրբազան պատերազմն» էր ընդդէմ յեղափոխութեան, յանուն եւրոպական իմպերիալիզմի ու սեփական բուրժուազիայի յաղթութեան։

*) Այս առթիւ երկար և փոստացի յօդած է գտնուած „Кавкавказ. Вестник С. Н. Ком." № 1 ում. Բայց չեմ սխալւում ընկ. Ս. Շահումեանի գրչին է պատկանում դա։

Անխուսափելի քաղաքացիական կռիվը պայթեց Մարսելն և անցաւ պրոլետարիատի կատաղեալ յաղթանակով, մի յաղթանակ, որ ուղիղ վեց ամիս յետոյ վերածուեց պարտութեան։

Թուրք-գերմանական, մուսաւաթ-մենշեւիկեան ու անգլո-դաշնակցական հակադիր շահերի բաղխման ճիրաններում մեկուսացած, Անդրկովկասի առաջին հոկտեմբերը մարում է գործարանային քաղաքի պուլան-պալան բարձրացող ծխի մէջ...

Չի մեռնում Բագուի յեղափոխութիւնը, նա մրխում է և երբեմն առկայծում հեռաւոր շրջաններում...

Թէ մինչ հոկտեմբերեան օրերը ու թէ այնուհետև Անդրկովկասի գիւղացիական շրջանները ճնացին անհաղորդ յեղափոխութեան բարիքներին։ Սակաւահող հայ շինականը ոչ միայն չստացաւ և ոչ մի թիզ հող, այլև վերադարձնելու դաղթականութիւնը խլեց նաև նրա ունեցածը։ Գանձակի շրջանի թուրք գիւղացին, որ առաջինն էր սկսողը Անդրկովկասի ագրարային յեղափոխութեան, «մտցրեց հողային ռեֆորմները»— խլելով կալուածատէրերի, խաների ու բէկերի ձեռքից հազարաւոր դեսեատիններ և կոտորելով իր խնկապէս արիւնը ծծողներին. բայց ու

պա վրաց դիւղացիական լայն շրջանները բարձրացրին այդ ընկած դրօշակը և դեռ մինչև այսօր էլ հերոսական Օսեթիայի լեռներում ծածանւում է վեհամբարձ։

* * *

Բաքվի պրոլետարիատը այսօր կրկին անգամ ոտնում է իր ազատագրման Հոկտեմբերը...

Ադրբէջանի ու նրա հետ խորհրդային Ղարաբաղի ողջ դիւղացիութիւնը այսօր առաջին անգամ ոտնում է միջազգային պրոլետարական յեղափոխութեան մեծ ոտը։

Երեկ նա խաբուած և անուժ, անգիտակ իր դասակարգային շահերին, վտարուած յեղափոխական բանակից՝ խարխափում էր արտասահմանեան իմպերիալիզմի ճիրաններում։ Իսկ այսօր պրոլետարական բընազդով ոտի ելած, նա հպարտօրէն դիմաւորում է կարմիր Հոկտեմբերը, որ իրենն է, իր ստեղծած, իր դեկավարների՝ 26 Կոմիսարների արիւնով ներկած...

Այն աւանդը, որ իր փորձով—տաճկական, գերմանական, անգլիական իմպերիալիզմի լծի տակ—ապրեց Բաքուն, Ադրբէջանի աշխատաւորութիւնը—տարածելու, նախրաբերելու է անկասկած Արևելեան այլ ժողովրդների աշխատաւորութեան, կտակելու է յեղափոխական ալիքներով ողողած զարթնող Արևելքին։

Ադրբէջանի իրականութեան այս երեք տարիների տարուբերումը վերջնականապէս դարբնեց աշխատաւորական լայն շրջանների մի համոզմունք—որքան էլ չկռահեն բոլշեվիզմի երդւեալ հակառակորդները, որքան էլ չը բանեցնեն նրա թշնամիները—նա ուժեղ է, կը զօրանայ եւ կը յաղթանակէ քանի կայ, պիտի լինէ և հզօրանայ՝ բանւոր դասակարգը։

Երեք տարիների բաղխումը Ադրբէջանի դերազանցապէս դիւղացիական մասսայի մէջ առաջ բերեց որոշ դասակարգային շերտաւորում. մի հանգամանք, որ անկասկած գրաւական է դասակարգային պայքարի ուժեղացման, որի լոզունգը նոյն Հոկտեմբերեան յեղափոխութիւնն է ընդգծել։

Թւում է, որ փորձութիւնների շրջանը անցնում է, որ աշխարհը արևող Հոկտեմբերի ճառագայթները կոսկեղծեն նաև Ադրբէջանի այն հատուածը, որ մինչև այժմ թեքւած համաշխարհային հակայեղափոխութեան կողմը, տառապում է թշուառութեան, տանջանքների ու անարգանքի մէջ։

Արևելքի ջահակիր աղատատենչ ու խոյացող հայ և վրացի յեղափոխական պրոլետարիատը պէտք է ապրէ իր նոր Հոկտեմբերը...

Եր. Մելիք

Գ. ՏԵՐ-ՍՈՒՂՈՆԵԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Եւրոպայի յեղափոխական շարժումների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ ազգային պետութեան սահմաններում ծագող յեղափոխութիւնն անխուսափելիորէն անդրադառնում է ոչ միայն եւրոպական, այլ և յեռամեաց պետութիւնների քաղաքական կեանքում։ Եթէ յաճախ այս կամ այն երկրի յեղափոխական բռնկումը, իշխող դասակարգի կամ պետական կարգի տապալումը հարստահարուող և ճնշուող ազգերի կողմից, անպայմանօրէն արձագանք գտնելով ուրիշ, հաշարաւոր վերստերով անջատուած երկրներում, անմիջական համապատկեր, համատիպ չէ ստեղծում, յաճենայն դէպս ունենում է հսկայական գաղափարական ազդեցութիւն, որը ժամանակի ընթացքում զարգանալով և ուռճանալով տալիս է յեղափոխական պտուղներ։

Հոկտեմբերեան սոցիալիստական յեղափոխութիւնը ոչ միայն նորից, միանգամ էլ եկաւ հաստատելու մատնանշած պատմական օրէնքի անվիճելիութիւնը, այլ նա եկաւ ապացուցելու բոլոր երկրների տանջուող հարստահարուած դասակարգերին, որ տառապող ու այլասերման մատնուած մարդկութիւնն արդէն չի կարող այլևս ապրել հին կեանքի կապանքներում, որ պիտի փշրուին այդ կապանքները և ստեղծուի նոր փայլուն հաւասարութեան աշխարհը ու իրական մարդկային կոմունայի վրայ իդէալը։ Ծնելով պատմութեան մէջ չտեսնուած համաշխարհային բաղխումների փոթորիկներից, նա յուսահատուած, լքուած հարստահարուող դասակարգերին ու ազգերին տուեց անպիսի պատգամներ ու լոզունգներ, որ այդ դասակարգերն ու ազգերը սթափեցին, վերակենդանացան։

Այդ պատգամներն էին՝ ընդհանրացուած ընդդէմ կապիտալի, կիսաբ ընդդէմ իմպերիալիզմի՝ աշխատանքի, կոմունայի թագաւորութիւնը հաստատելու համար։

Եւ այդ պատգամներն ի մի ձուլեցին համաշխարհային պատերազմով անջատուած աշխատանքի բոլոր պինդորներին և տարուկ ազգերին։

Մոսկուան դարձաւ բոլոր ճնշուածների Երուսաղէմը, նոր Ռուսաստանը բոլոր հարստահարուածների ազատագրման փարոսը։

Եւ հոկտեմբերեան յեղափոխութեան երրորդ տարեդարձին, երբ Ռուսաստանի պրոլետարիատը համաշխարհային պրոլետարիատի հետ միասին տօնում է իր յաղթութեան տօնը, երբ հոկտեմբերեան հրդեհի

բոցերը կլանում են կապիտալիզմի վերջին մնացորդներն ու կարկուտի նման հազարաւոր լուրեր են տեղում Կրեմլ այդ հրդեհի ոյժի մասին, մենք կուզէինք արձանագրել յեղափոխական մի անկեան, Հայաստան երկրի մի փոքրիկ, վոտա, արիւնաքամ աշխատաւորութեան գերմարդկային կռիւը, իրականութիւն դարձնելու հոկտեմբերեան յեղափոխութեան աւետած սրբազան պատգամները։

Հոկտեմբերեան յեղափոխութեան բարիքների վայելումից զուրկ մնաց Հայաստանի աշխատաւորութիւնը։ Ազգային բուրժուազիան և նրա պնակալէզները տոգորուած ազգային բուրժուական պետութիւն ստեղծելու իլլիւզիայով, Անդրկովկասի հակայեղափոխական տարրերի հետ միասին արհեստականօրէն բաժանեցին Հայաստանի աշխատաւորութիւնն իր հարազատ եղբայր, ռուսական պրոլետարիատից, որից տասնեակ տարիներ նա ուսանել և իւրացրել է ազատութեան կռիւի մեթոդներն ու ուղիները։

Նրան խլելով Ռուսաստանի մեծ յեղափոխութեան գրկից, նեռեցին հակայեղափոխութեան ճանկերը։ Ազգային բուրժուազիան և նրա իդեօլոգներն աշխատեցին համոզել հայ բանուորին ու գիւղացուն, թէ նա տակաւին ազատագրուել է, թէ նա արդէն ունի հայրենիք, որի սահմանները միայն պիտի ընդլայնել և որ բոլոր յոյսերը պիտի կապել իմպերիալիզմին, որովհետև նա է, որ Հայաստանին տալու է հայ, լայ-

նաժաւալ սահմաններ և ոլշեւիզմից մահմեդական ազատանալու։ «Ռուսաստանը մեզ համար անվերադարձ մեռել է»— ահա այս էին անդադար շշնջում հայ բանուորի և գիւղացու ականջին հայ ազգայիններները, որովհետև նրանք շատ պարզ էին ըմբռնում, որ եթէ հայ տարրը պահպանի հին տրադիցիոն սէրը դէպի ռուս աշխատաւորութիւնը, դա կնշանակէ Հայաստանի բանուորա-գիւղացիական մասսաների անընկճելի ձգտումը դէպի Սովիտական Ռուսաստան, և իրենց ապագայ ծրագրների խորտակումը։

Ի զուր չէր յայտարարում գնդապետ Օհանջանեանը պարլամենտի ամբիոնից՝ «Մեր ամենախիստ և ամենամեծ վտանգը, որի դէմ պիտի կռուենք, դա հայ ժողովրդի ռուսասիրութիւնն է»։

Ռուսասիրութիւն ասելով Օհանջանեանը և նրա կուսակցութիւնը հասկանում էին հայ աշխատաւորութեան անխուսափելի ձգտումը դէպի բանուորա-գիւղացիական յեղափոխութիւնն, դէպի տապալումն այն արհեստական անջրպետի, որ բաժանեց Հայաստանի բանուորա-գիւղացիական զանգուածներին Ռուսաստանի հերոս պրոլետարիատից։

Եւ այդ կռիւը անողոք կերպով, ամենախայտառակ միջոցներով սկսեց Հայաստանի իշխող կուսակցութիւնը՝ ընդդէմ հայ բանուորի ու գիւղացու սիրոյ՝ տածած ռուսական յեղափոխութեանը։ Զրպարտութիւնների, չիշոցների դանդաղ յօրինուած վարկա-

բնիկ փոքրաթիվների կոյսի տակ Դաշնակցությունը ցանկացավ թաղել հայ բանվորի ու գիւղացու «ռուսաֆոբական» յեղափոխական կորովը, և այդ դերեզմանի վրայ կառուցնել հայ ժողովրդի առելությունն en masse դէպի սուսական հոկտեմբերեան յեղափոխությունը և նրա ծնած դաղափարները։

Բայց հայ աշխատաւորությունը շովինիստական ամենանեխած մթնոլորտում, ֆիզիքական և բազմաթական կեանքի ամենածանր, դժոխային պայմաններում, ուր «դոյությունն անէծք» էր դառել, դոհ չը գնաց հայ ազդայինչիների կուռին՝ ուղղած ռուսական կոմմունիստական յեղափոխության։

Ազգային բուրժուազիայի իմպերիալիզմի հաւատարիմ ծառաների թակարդները, չպատեցին հայ գիւղացուն ու բանվորին։

Հայ աշխատաւորը գտաւ իր մէջ տենչափ գրանցիալ ոյժ, յեղափոխական թափ ու կորով, որ յամառ կերպով ոչնչաց գիմադրել այդ լուսող թակարդներին։

Հայաստանի Ռուսաստանից բաժանման և անկախ յայտարարելու օրից կեանքը հայ բանվորի ու գիւղացու դարձաւ դժոխք։ Սովը, ազդային կոտորածների արհաւիրքները, համաճարակները դարձան սովորական երևոյթ։

Ու այդպիսի դժնդակ, չարաքաշ պայմաններում Հայաստանի աշխատաւորությունը մի բան էր միայն երազում, մի բան էր փափագում՝ երբ է մօտենալու ռուսական յեղափոխությունը Հայաստանի ուռնմանները

ին, երբ է եկեալու կարմիր, իրեն ազատագրող բանվորը, երբ է տապալելու դաշնակցությունն, բուրժուազիայի այս ամենաղծուած սպասաւորների իշխանությունը։

Իրօք պիտի լինել յեղափոխության անվեհեր գինուոր օրպէսզի սովի, տրիբնի ճիրաններում դալարելիս էլ երազել յեղափոխության մասին։

Ու հայ աշխատաւորությունն գտաւ նրանք այնպիսի գինուորներ էին, որոնք յուռած իրենց հայեացքը դէպի հիւսիս սպասում էին այնտեղից ծագող և մօտեցող իրենց աղատության արշալոյսին, սպասում էին անհամբեր, սրտատրոփ։

Ռուսական յեղափոխությունը դեռ հեռու էր Հայաստանից, նա դրաղուած էր իր ներքին հակայեղափոխության ճնշելով և իր դիրքերը ամրացնելով։

Հայաստանի միջազգային յեղափոխության մարտիկները՝ կոմմունիստները չէին կարող անտես առնել հայ աշխատաւորության կեանքի կացությունը եռող եղափոխական եռանդը, հարկաւոր էր հայ գիւղացու և բանվորի յեղափոխական նկրտումները դնել կանոնաւոր ռէլսների վրայ, անհրաժեշտ էր ուղղություն և կազմակերպություն տալ նրա յեղափոխական կուռի ձգտումներին։

Վերցնելով այդ ծանրախաչն իրենց վրայ Հայաստանի կոմմունիստները հիմք են դնում կոմմունիստական կուսակցության, բանվոր-գիւղացիական մասսա-

ների կազմակերպած շարժումներին Հայաստանի անկախության մի տարուց աւելի ժամանակից յետոյ։

Ամենակարճ ժամանակամիջոցում երեք չորս ամսուայ ընթացքում Հայաստանը պատւում է կոմունիստական ցնծումներով, ուր հայ բանւորն ու գիւղացին սկսում են ուսանել յեղափոխական գաղափարները, ուր պատմականօրէն դասակարգային երկրութիւն չստացած մասսաները սկսում են իւրացնել ազատագրման և քաղաքացիական կուռ մեթոդներն ու տակտիկան։

Իսկապէս դա մի տարօրինակ է թւում այն հանգամանքը, որ աշխատաւորական մի հատուած, որպիսին հայ աշխատաւորութիւնն է, որը 35 տարուայ ընթացքում սնւել է շովինիզմի «բարիքներով», ու բացի «թիւրը տպանելու» բարոզից ոչինչ չի լսել ու սովորել, այդ աշխատաւորութիւնն ամենակարճ ժամանակամիջոցում իւրացնում է ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների եղբայրութեան ու համերաշխութեան գաղափարները։

Բայց տարօրինակ ըստ երևոյթին այս հանգամանքը հասկանալի է դառնում, երբ մենք նկատի ենք առնում այն հիասթափումը, որ հայ աշխատաւորութիւնը ստացել է 3 տասնեակ տարուայ շովինիզմի թոյնից և այն յոգնածութիւնը, որ զգացել է եղբայրասպան անվերջ կատաղածներից։

Ահա թէ ինչու կոմունիզմը դառնում է Հայաստանի աշխատաւոր մասսաների փաքսոը, ահա թէ ինչու առաջական յեղափոխութեան յաղթական ելքը գտնում է և հայ ժողովրդի փրկութեան ու ազատագրման ելակէտը, և ահա թէ ինչու կոմունիստական կուսակցութիւնը դառնում է այն լուսատու ջահը, որի շուրջը համախմբում են Հայաստանի բանւորն ու գիւղացին։

Մի չափազանց արագութեամբ աճում են կոմունիստական կուսակցութեան շարքերը. մի քանի ամսուայ ընթացքում, աշխատանքի ամենադժուարին պայմաններում, կոմունիստական կուսակցութիւնը իրեն առաջին կոնֆերանսին ունենում է 800 կազմակերպած անդամ, հաշի չառնելով այն լայն մասսաները, որ դառնում են անդամութեան յինակէաը կուսակցական կազմակերպութիւնների։

Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնների անդր Նիկ կոնֆերանսը, թարգման հանդիսանալով հայ բանւորի ու գիւղացու իղձերի, պարզ և որոշակի յայտարարում է—Հայաստանը կազատուի համաշխարհային պրոլետարիատի ազատագրման հետ միասին՝ քաղաքացիական կուռ միակ ճշմարիտ ուղիով։ Հայաստանը խզկուել իր կապերը իմպերիալիզմից, և իր բախտը կապելու առաջական պրոլետարիատի յեղափոխական հանգոյցին։

Հայաստանի բանւորագիւղացիական մասսաները իրենց կոմունիստական կազմակերպութիւնների ա-

ռաջին կոնֆերանսին պատրաստակամություն են յայտնում կուռ բանելու ընդդեմ իշխող կուսակցության և անգլո-ամերիկական շիրժայի մակլերների։

Բայց այդ կռվի վերջնական յաղթության համար հարկաւոր էին օբեկտիվ պայմանները։ Եւ 4 ամսից յետոյ 1920 թիւ մայիսին Հայաստանի բանւորա-գիւղացիական մասսաների առաջ իրենց ամբողջ հասակով ցցւում են այդ օբեկտիվ պայմանները։

Ռուսական սոցիալիստական յեղափոխության տիրները յաղթականորէն սեղալով գալիս հասնում են Ադրբէջանի սահմաններին և իրենց զէրկն առնում Անդրկովկասի հակայեղափոխական հանրապետություններից մէկը՝ Ադրբէջանը։ Քնկնում է պանիսլամիզմի գեկավարների ցիտադելը՝ Բաքուն։

Բաքուի պրոլետարիատի յաղթանակի լուրը կայծակի արագությամբ տարածւում է Հայաստանի բոլոր անկիւնները, ու համակում ուրախության և խանդավառության զգացմունքներով բանւորա-գիւղացիական հոծ խաւերը։ Ադրբէջանի յաղթանակը ըմբռնւում և ուսնւում է հայ աշխատաւոր մասսաների շարքերում, որպէս իրենց ուսը, իրենց յաղթությունը։

Տապալել է անդրկովկասեան հակայեղափոխական ներկայացուցիչներից, հայ Իրքական եկբայրասպան կուսորածներ սնողներից մէկը, մուսավաթական Ադրբէջանը, պիսի տապալել և մի ուրիշը Դաշնակցությունը։ Ահա այն հերթական անցնտաճգելի հարցը որ իր առաջ է դնում հայ բանւորությունը։

Եւ Հայաստանի բանւորա-գիւղացիական մասսաները մայիսի 1-ին դուրս են գալիս փոդոց քաղաքացիական կռվի, իշխանությունը գրաւելու և Խորհրդային Հայաստանի լոզունգներով։

Ապստամբում է Հայաստանի բանւորական սիրտը, Ալէքսանդրապոլը. Ալէքսանդրապոլին յաջորդում են Մարիոամշի, Նոր Բայազէդի, Դարսի, Դաղախ Շամշադինի ապստամբական շարժումները։ Հայաստանի զանազան վայրերում բանւորները ու գիւղացիները իրենց ձեռքն են առնում իշխանությունը և սկսում տապալել Հայաստանի հակայեղափոխական կենտրոնը՝ Երևանն ու միանալ խորհրդային Ադրբէջանին և Ռուսաստանին։ Մօտ երկու ամսւայ քաղաքացիական կռւից յետոյ Հայաստան՝ի բանւորությունն ու գիւղացիությունը տարով հակայական զոհեր՝ պարտւում են յեղափոխության և քաղաքացիական կռվի տատասկոտ ուղին ընկնում են հաղարաւոր կոմմունիստ բանւորներ ու գիւղացիներ։

Հարիւրաւոր լաւագոյն ընկերներ մինչև գարնան ինկիլիզիոյի ամենակեղտոտ մինչոցներով մահան են դատապարտւում, տասնեակ հարիւրներով բանտեր են նետւում ու ամենադաժան ձևով տանջանքի մատնւում։

Դաշնակցությունը յեղափոխության նահատակների դիակների վրայ նորից վերահաստատում է իր իշխանությունը և տօնում իր յաղթության դիւային տօ-

նը, մի հարց ժամանակ էլ յոլովանալու հայ բանուորութեան և գիւղացիութեան արիւնով։

Բայց պարտուել չի նշանակում մեռնել։ Հայաստանի բանուոր-գիւղացիական մասանները ժամանակաւոր պարտութեան փորձից առնելի են քաջալերուել նոր կռուի, յաղթական կռուի համար։

Այդ յաղթութեան ժամը հեռու չէ։

Հոկտեմբերեան յեղափոխութեան Գ.-րդ տարեդարձին, երբ Ռուսաստանի պրոլետարիատը տօնում է իր յաղթական երրորդ տարեդարձը, երբ միջազգային պրոլետարիատը իր ձեռքը մեկնել է ռուսական պրոլետարիատին իր հոկտեմբերի յաղթութեան համար, Հայաստանի աշխատաւորութիւնը բացականչում է՝ Ռուս բանուորներ եւ գիւղացիներ՝ մանակից լինելով ձեր խանդավառ տօնին, մենք ձեզ հետ ենք, ձեր յաղթանակը մեր յաղթանակն է, ձեր կռիւը մեր կռիւն է։

Կեցցէ՝ Ռուսաստանի հոկտեմբերեան սոցիալիստական յեղափոխութիւնը։

Կեցցէ՝ համաշխարհային հոկտեմբերը։

Կեցցէ՝ Հայաստանի հոկտեմբերը։

Դ. Տէր Սիմէոնեան

Պետական Հրատարակչութեան Հայկ. Սեկցիայի Ռուսերէն Բաժանմունքի Հրատարակութիւններ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1) Ս. Ատենեան։ «Ո՞ւր է ելքը» . . գինը—25 ք.
2) «Կոմուն. Ինտերնաց. Կոչը Պարսկաստանի, Հայաստանի և Տաճկաստանի կեղեքուած աշխատաւորութեան . . . . . գինը 5 ք.
3) Ելենա Բրոնինա։ «Ինչու ես Սաւետակի Կաւավարութեան պաշտպանը գարձայ» . գինը—10 ք.
4) Կ. Մ՝ինին։ «Ովքեր են Կոմունիստները» գինը—10 ք.
5) Լ. Տրոցկիյ։ «Տնտեսական կառուցման հերթական խնդիրները» . . . . . գինը —15 ք.
6) Զինովև։ «III-րդ Կոմունիստ. Ինտերնաց. և մի. Ազգային հակա-յեղափոխութիւնը» գինը—10 ք.
7) Պետրովսկի։ «Կարմիր Դրօշակ և ազգերի եղբայրութիւնը» գինը—8 ք.
8) Ռուսակով։ «Ո՞վքեր են հակա-յեղափոխականները և ինչպէս կռուել նրանց հետ» գինը—10 ք.
9) «Քաղաքացիական Իշխանութիւնը և ազգային հարցը Ռուսաստանում» գինը 5 ք.
10) «Ամէն մէկ գեղացի ինչ պէտք է գիտենայ
11) «Հոկտեմբերեան Յեղափոխ
գին»

ՀՀ Ազգային գրադարան
NL0403951

ԳԻՆՆ է 15 կոպ

Գրաքննությունից ոչ որ նշանակված գնից բարձր ծախսելու իրավունք չունի։
Գլխավոր. Հրատ. Հայկակ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
ՌՈՍՏՈՎԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Государственное издат. Армянская Секция Ростов н-Д.

5000 экз. Р. В. II.